



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏՈՐՖԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N* 15

գ. Տորֆավան
փոստ 1624

« 23 ».....12.....2013 թ.

« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքի ավագանու 20.12.2013 թվականի թիվ 11 նիստի 12-ն, 13-ն, 14-ն որոշումներ:

Կից 23 էջ:



Տորֆավանի համայնքի ավագանու

Ա. Խաչատրյան

Գեղարքունիքի մարզպետարան
ՆԱԿԱԿՆԵՐԻ ԲԱԺԻՆ
Մտեց թիվ 2-14
08. 01. 2014թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏՈՐՖԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ

20 Դեկտեմբերի 2013 թվականի N 12 – Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՈՐՖԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքի տարածքում 2014 թվականի հունվարի 1-ից սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի .աե ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում

կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի .աե ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, « Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 9000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 9000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության

համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիներին) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

11. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

1) որոշման 4-րդ կետով սահմանված տեղական տուրքը գանձել նաև ամսական և կիսամյակային պարբերականությամբ.

2) որոշման 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված տեղական տուրքը գանձել նաև ամսական պարբերականությամբ:

12. Համայնքի տարածքում 2010 թ. հունվարի 1-ից սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000 դրամ.

2) համայնքի ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար յուրաքանչյուր մասնակցից՝ աճուրդի դրված ապրանքի մեկնարկային գնի 2 %-ի չափով.

3) Մրցույթների մասնակցության համար՝

ա. եթե գնման առարկայի գինը չի գերազանցում 1000000 դրամը 1000 դրամ,

բ. եթե գնման առարկայի գինը չի գերազանցում 90000000 դրամը 2000 դրամ,

գ. եթե գնման առարկայի գինը գերազանցում 90000000 դրամը 10000 դրամ

13. Ուժը կորցրած ճանաչել 2013 թ. Հունվարի 11 -ի ,Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տորֆավանի գյուղական

համայնքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների
դրույքաչափեր սահմանելու մասին որոշումը:

Կողմ -5

Դեմ -0

Չեղնակալի -0

1. Կ. ՀՈՎՀԱՆՅԱՆ

2. Ա. ՄԿՈՅԱՆ

3. Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ

4. Ա. ԳԱԶԱՐՅԱՆ

5. Գ. ՄԻՐԶՈՅԱՆ



ՏՐՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ:

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏՈՐՖԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> Դեկտեմբեր 2013 թ N 13 -Ն

**ՏՈՐՖԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԱԿԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով
և 32 -րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ավագանին

որոշում է՝

1, Հաստատել Տորֆավան համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների
թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ - 5

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

1. Կ ՀՈՎՀԱՆՅԱՆ

2. Ա. ՄԿՈՅԱՆ

3. Է. ՍԵՂՈՎԿՅԱՆ

4. Ա. ԳԱԶԱՐՅԱՆ



5. Գ. ԱՐԴՁԻՅԱՆ

ՏՈՐՖԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՏՈՐՖԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանին սահմանում և հաստատում է գյուղապետանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Գյուղապետարանի աշխատակազմ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ներառյալ 20% բարձր լեռնային

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծածկագիր	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար		1	189151
Համայնքի ղեկավարի տեղակալ		1	148055
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
Աշխատակազմի քարտուղար	1-2-1	1	146685
Առաջատար մասնագետ	3-1-1	1	93834
Առաջատար մասնագետ	3-1-2	1	93834
1-ին կարգի մասնագետ	3-2-1	1	91954



Տորժավանի համայնքի ղեկավար

Ա. Խաչատրյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՈՐՖԱՎԱՆ
ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 թվականի դեկտեմբերի 20 -ի N 13 -Ն որոշումից

ՏՈՐՖԱՎԱՆԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի
և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի դրույթներով համայնքի
ավագանին սահմանում և հաստատում է գյուղապետանի աշխատակազմի աշխատակիցների
թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Գյուղապետարանի աշխատակազմ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
Ներառյալ 20% բարձր լեռնային

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծածկագիր	ՀԱՍՏԻՔԱՑԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար		1	189151
Համայնքի ղեկավարի տեղակալ		1	148055
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
Աշխատակազմի քարտուղար	1-2-1	1	146685
Առաջատար մասնագետ	3-1-1	1	93834
Առաջատար մասնագետ	3-1-2	1	93834
1-ին կարգի մասնագետ	3-2-1	1	91954



Տորֆավան համայնքի ղեկավար

Ա. Խաչատրյան